ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

17.01.2019թ.
Ժամը 09:30

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Վարդանյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ս. Վարդանյան)

1. ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու մասին:
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու մասին.

(Ս. Վարդանյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը, որի մասին համակարգի միջոցով տեղեկացվել էր **<<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ին և <<Լեբրոն>> ՍՊԸ-ին /<<Գարդմեն>> ՍՊԸ-ի հետ համատեղ պայմանագրով/՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

1.2 <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ն և <<Լեբրոն>> ՍՊԸ-ն /<<Գարդմեն>> ՍՊԸ-ի հետ համատեղ պայմանագրով/ հրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել են անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.
(Ս. Վարդանյան)

2.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացության համաձայն **<<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ն և <<Լեբրոն>> ՍՊԸ-ն և<<Գարդմեն>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն: Հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակիցների ներկայացված գնային առաջարկից: Հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
(Ս. Վարդանյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին
(Ս. Վարդանյան)

4.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

<<Լեբրոն>> ՍՊԸ-ին-1-ին և 2-րդ չափաբաժիններով

<<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ին-3-րդ չափաբաժնով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Վարդանյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան